



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ**

15.05.2015

Հարգելի նիստի մասնակիցներ, գործընկերներ,



Վերջերս Հայաստանի բանկերի միությունը կայացրել է ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների բանկային ասոցիացիաների Միջազգային Համակարգող Խորհրդին՝ Միջազգային Բանկային Խորհրդին (ՄԲԽ) միանալու մասին որոշում: Այդ որոշումն ընդունելիս, մենք նախևառաջ առաջնորդվել ենք այն հանգամանքով, որ ավելի քան 10 տարի առաջ «Ռոսիա» ասոցիացիայի նախաձեռնությամբ ստեղծված բանկային ասոցիացիաների և միությունների միացության (որին ներկայումս անդամակցում են 12 պետությունների պրոֆիլային կազմակերպություններ)

նպատակները և առաքելությունը համապատասխանում են ազգային բանկային ասոցիացիաների խնդիրներին:

Բանկային հանրությունը բարդ ժամանակներ է ապրում, պարբերաբար կանգնելով նոր մարտահրավերների առջև, որոնք թելադրված են համաշխարհային անկայուն տնտեսական միջավայրով և արագ փոփոխվող գլոբալ աշխարհատնտեսական կապերով: Այդ իսկ պատճառով ավելի հրատապ է դառնում ազգային բանկային միությունների միջև սերտ կապերի, կարծիքների, ինֆորմացիայի և փորձի պարբերական փոխանակման, տարբեր երկրների բանկային համակարգերի զարգացման դինամիկայի մշտական վերլուծության հիման վրա օպտիմալ որոշումների համատեղ կայացման անհրաժեշտությունը: Եվ այդ առումով ՄԲԽ-ի հարթակը տրամադրում է հիանալի հնարավորություններ համատեղ արդյունավետ աշխատանքի համար: Ահա թե ինչու ենք մենք այսօր այստեղ՝ Ձեզ հետ:

Չնայած 2014 թվականը բավականին բարդ էր, Հայաստանի բանկային համակարգը, որը բաղկացած է 21 առևտրային բանկից, տարվա արդյունքներով ցուցաբերեց ակտիվների, պարտավորությունների, վարկային ներդրումների երկնիշ աճ: Զարգացման տեմպերով երկրի բանկային համակարգն արդեն շատ տարիներ գերազանցում է Հայաստանի ՀՆԱ-ի աճի տեմպերը: Ընդ որում, եթե 2012թ-ին

վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում էր 40%, ապա 2014թ-ի արդյունքներով այս ցուցանիշն աճել է մինչև 47,7%: Վերջին մի քանի տարիների ընթացքում աճել են նաև ակտիվներ/ՀՆԱ և դեպոզիտներ/ՀՆԱ հարաբերակցությունների ցուցանիշները՝ համապատասխանաբար 75,8% և 37,8%: Հայաստանի բանկային համակարգը գործում է կոշտ մրցակցության պայմաններում, երբ, օրինակ, շուկայում առաջին 5 բանկերի բաժինը չի գերազանցում 46%: Պետք է նաև արժանին մատուցել ՀՀ Կենտրոնական բանկին, որը 2014թ-ի վերջին կայունացրեց արտարժույթային շուկան, ինչի արդյունքում ազգային տարադրամի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 15%-ով, մնալով տնտեսապես հիմնավորված և անվտանգ մակարդակում: Նույն ժամանակահատվածում ԿԲ-ն որոշում ընդունեց 2017թ-ի հունվարի 1-ից առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափն ավելացնել 6 անգամ: Արդյունքում մոտակա երկու տարիների ընթացքում դեպի երկրի բանկային համակարգ կհոսի լրացուցիչ առնվազն \$300 մլն:

Լրացուցիչ կապիտալի ներհոսքը համակարգ էապես կթեթևացնի բանկերում լիկվիդայնության հետ իրավիճակը, կառաջանան վարկավորման համար ավելի հասանելի ռեսուրսներ, և ընդհանուր առմամբ Հայաստանի բանկերի խոշորացումը թույլ կտա էլ ավելի բարելավել նրանց հուսալիության, կայունության և արդյունավետության ցուցանիշները, ինչը հեռանկարում կբացի նոր հնարավորություններ բանկային համակարգի զարգացման համար, կավելացնի տնտեսությունում ֆինանսական միջնորդության ծավալները, ինչպես նաև կամրապնդի ՀՀ բանկերի կարգավիճակը միջազգային շուկայում որպես հուսալի գործընկերների: Այս ամենը կբերի համակարգի կայունության և էֆեկտիվության ավելացմանը:



### ՍՏԵՓԱՆ ԳԻՇՅԱՆԻ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈՆ

15.05.2015



Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը՝ ֆրանսիական «Կրեդիտ Ազրիկոլ» բանկի հետ համատեղ, հայտարարել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամ ստեղծելու մասին՝ ի հիշատակ Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկի նախկին գլխավոր գործադիր տնօրեն Ստեփան Գիշյանի:

Այս մասին Գաբրիել Մունդուկյանի անվան Ազգային Ակադեմիական Թատրոնում

Ստեփան Գիշյանի տարեդարձին նվիրված հուշ-երեկոյի ընթացքում հայտարարել է Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

Նա տեղեկացրել է, որ հիմնադրամը ծառայելու է երջանկահիշատակ Ստեփան Գիշյանի գործունեության ամենակարևոր ուղղություններից մեկին՝ հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանն ու երկու երկրների միջև բարեկամության խորացմանը:



«Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ» բանկին, որը հիմնադրամի ստեղծման գաղափարի առաջացման պահից մինչև իրականացումն աջակցել է մեզ: Հիմնադրամը երկար ճանապարհ ունի անցնելու: Դրա շահառուներն են լինելու այն երիտասարդները, վաղվա սոցիալապես ակտիվ այն քաղաքացիները, որոնք կերտելու են հայ-ֆրանսիական բարեկամության նոր ապագան՝ ստեղծելով նոր արժեքներ: Ամեն տարի հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կքննարկի առաջադրված ծրագրերը և կընտրի նրանք, որոնք տվյալ տարում կհապատասխանեն ծրագրված նպատակներին», - ասել է Հակոբ Անդրեասյանը:

Նրա խոսքով, Ստեփան Գիշյանը դարձել է այն ուղենշային անձնավորությունը, որ նոր ստանդարտներ և արժեքներ է բերել Հայաստանի բանկային համակարգ:

«Նա 19 տարի առաջ շատ պատահաբար, բայց նաև օրինաչափ հայտնվեց մի այնպիսի ծրագրի կենտրոնում, որի հեռանկարի վրա շատերը կասկածում էին: Այն, որ այսօր բանկային համակարգում Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկն իր ուրույն տեղն ունի, առաջին հերթին Ստեփանի նոր մոտեցումների հետևանքն է: Մեկ տարի է, ինչ ապրում ենք առանց Ստեփանի, սակայն նրա ներկայությամբ: Հիշում ենք Ստեփանին և շարունակում նրա սկսած գործը», - ասել է Հակոբ Անդրեասյանը:



Բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը, իր հերթին, նշել է, որ Ստեփան Գիշյանն իր ամենամտերիմ ընկերներից էր:

«Ես տարիքով ավելի մեծ էի, և եթե սկզբնական շրջանում Ստեփանն ինձանից, ամենայն հավանականությամբ, շատ բան էր սովորում, ապա մեր ընկերության վերջին տասնամյակում ես իրենից ընդօրինակելու շատ բան ունեի: Միշտ հիշում եմ Ստեփանին

և հպարտանում, հաճախ տեսնում նրան երազներումս: Այդ հուշերն ինձ ապրելու ուժ ու եռանդ են տալիս:

Ստեփանը շուրջ երկու տասնամյակ ղեկավարում էր մի բանկ, որը դարձել է անկախ Հայաստանի վերածննդի խոսուն խորհրդանիշը: Շնորհիվ բարձր կամային

հատկանիշների, նպատակասլաց և հետևողական աշխատանքի, գործին անմնացորդ նվիրվածության, Ստեփան Գիշյանին մի քանի տարում լիովին հաջողվեց իրականացնել բանկի ստեղծման դժվարագույն ծրագիրը: Նա կարողացավ ընկերներին համախմբել իր շուրջ և ստեղծել նմանատիպ մտածողությամբ կոլեկտիվ, որն այսօր շարունակում է նրա գործը»,- ասել է Սամվել Ճզմաչյանը:

«Եվ որպես այդ աշխատանքի արժանի գնահատական 2001թ. Ստեփան Գիշյանը ՀՀ Կառավարության կողմից պարգևատրվեց «Անանիա Շիրակացի» մեդալով, իսկ Ֆրանսիայի նախագահը նրան շնորհեց «Վաստակի համար» ազգային շքանշան: Բանկն այսօր էլ շարունակում է մնալ գյուղացի աշխատավորի գլխավոր գործընկերը, օգնականն ու խորհրդատուն, չնայած որ հետագայում նա դարձավ ունիվերսալ դրամատուն: 2006-2007թթ. նա նաև ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը»,- ասել է ՀՀՄ-ի նախագահը:

Մշակութային համարներով ուղեկցվող հուշ-երեկոյի ընթացքում Ստեփան Գիշյանի մտերիմները և գործընկերները կիսվել են նրա մասին հիշողություններով:

## ԱՐՂՉԻՆԲԱՆԿՆ ՕԲԻԴ-Ի ՀԵՏ ՍՏՈՐԱԳՐԵԼ Է \$10 ՄԼՆ-Ի ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

03.04.2015



Արղշինբանկը և OPEC-ի (Նավթարդյունահանող երկրների կազմակերպության) Միջազգային զարգացման հիմնադրամը (OFID) մարտի 31-ին Վիեննայում ստորագրել են \$10 մլն-ի վարկային պայմանագիր:

Վարկային միջոցներն ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների կողմից փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման ոլորտում իրականացվող

նախագծերի ֆինանսավորմանը:

«Ես բարձր եմ գնահատում այն փաստը, որ OFID-ի կողմից տրամադրված միջոցները կնպաստեն Հայաստանի էներգետիկ ոլորտի զարգացմանը՝ շնորհիվ փոքր և միջին ձեռնարկությունների համար երկարաժամկետ ֆինանսական միջոցների հասանելիության ընդլայնման: Սույն պայմանագրի ստորագրումը հանդիսանում է OFID-ի և Արղշինբանկի միջև համագործակցության սերտացման լավ ցուցանիշ, որը,

անշուշտ, կունենա ամրապնդման և ընդլայնման միտում», - ասել է Արդշինբանկի վարչության նախագահ Մհեր Գրիգորյանը:

«Հայաստան իմ այցելությունների ընթացքում ես համոզվեցի Հայաստանի համար էներգետիկ ոլորտի կարևորության մեջ: Ես շատ ուրախ եմ, որ մեզ հերթական հնարավորությունն ընձեռվեց վերականգնվող էներգիայի՝ մասնավորապես փոքր հիդրոէլեկտրակայանների նախագծերի ոլորտում մեր գործունեությունն ընդլայնելու համար», - ասել է OFID-ի գլխավոր տնօրեն Սուլեյման Յասիր Ալ Հերբիշը:

Կողմերը համագործակցում են 2010-ից ի վեր: Այս պայմանագրի ստորագրմամբ համագործակցության ծավալը կկազմի \$20 մլն:



### ԱԿԲԱ-ԲԱՆԿԻ ԽՆԱՅՈՂ ՎԱՐԿԵՐԸ

10.04.2015



Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկն այսօր՝ «Խնայում ենք էներգիա, խնայում ենք գումար» խորագրով հանդիպում-քննարկմանն ազդարարել է նոր՝ «Խնայող վարկեր» պրոդուկտի մեկնարկը:

Պրոդուկտը ներդրվել է «Հարավ-արևելյան Եվրոպայի հիմնադրամ»-ի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ)՝

«Էներգոկրեդիտ» հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ:

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանն ասել է, որ պրոդուկտի ներդրումը նպատակ ունի Հայաստանում ստեղծել բիզնեսի զարգացման նոր հնարավորություններ:

«Քիչ ռեսուրսներ ունեցող Հայաստանի համար նման ծրագրերը կարևոր նշանակություն ունեն: Գյուղատնտեսությունը մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղ է, և ուրախալի է, որ այդ ոլորտում տնտեսվարողներին բազմատեսակ պրոդուկտներ են առաջարկվելու, որպեսզի վերջիններս կարողանան խնայել իրենց ռեսուրսները և ձեռք բերել նոր տեխնոլոգիաներ», - ասել է Հակոբ Անդրեասյանը: Նրա խոսքով՝ «Խնայող վարկեր»-ի տոկոսադրույքները ցածր են, ինչը նպատակ ունի ավելի շատ վարկառուներ ներգրավել:



13.04.2015



«Յունիբանկ» ՓԲԸ-ն կվերակազմավորվի «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության: Ինչպես հայտնում է բանկի մամուլի ծառայությունը, ԲԲԸ-ի վերակազմավորման մասին որոշումն ընդունվել է նախօրեին «Յունիբանկի» բաժնետերերի արտահերթ ժողովին:

Բանկի վերակազմավորման արդյունքում մասնակցի փոփոխություն չի կատարվելու և «Յունիբանկ» ՓԲԸ-ի պարտավորություններն իրավահաջորդությամբ անցնելու են «Յունիբանկ» ԲԲԸ-ին:

Հաղորդման համաձայն, բաց բաժնետիրական ընկերության վերակազմավորվելու բանկի որոշումը պայմանավորված է զարգացման որակապես նոր մակարդակ ապահովելու և միջազգային շուկա մուտք գործելու ռազմավարությամբ և համապատասխանում է համաշխարհային տնտեսության միտումներին:

«Գործընթացը կնպաստի բանկի աշխատանքի թափանցիկության և կորպորատիվ կառավարման մակարդակի բարձրացմանը», – նշվում է հաղորդման մեջ:

Այսպիսով, Հայաստանում գործող 21 առևտրային բանկերից չորսը կաշխատեն ԲԲԸ կառավարման սկզբունքով, 16-ը՝ ՓԲԸ-ի, մեկ բանկ՝ ՍՊԸ-ի:



ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ ԼՐԱՑՐԵԼ Է ԿԱՊԻՏԱԼԸ

17.04.2015



«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի հիմնական բաժնետերեր Խաչատուր և Սարիբեկ Սուքիասյանները 3,6 մլրդ դրամ են ներդրել որպես կապիտալի հերթական համալրում:

«Այս համալրումը ևս ոչ միայն կավելացնի բանկի նորմատիվային կապիտալի ընթացիկ մակարդակը, այլև կուղղվի տնտեսության վարկավորմանը և ֆիզիկական անձանց սպառողական վարկերի տրամադրմանը», - ասված է բանկի տարածած հաղորդագրությունում:

Հիշեցնենք, որ ս.թ. մարտի 20-ին Հայէկոնոմբանկի կապիտալը համալրվել էր 1,2 մլրդ դրամով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):